

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2017 թվականի
փետրվարի 27-ին կայացած նիստի

Նախագահ – Մ.Ա. Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս. Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 30-ը (ցուցակը կցվում է)

Դեկան Մ.Ա. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը

Օրակարգ.

- 3 Ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցի քննարկումն ու հաստատումը:
- 4 2016/2017 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների արդյունքների քննարկում:
/զեկ. փոխդեկան պրոֆ Վ.Պ. Վարդանյան/
- 5 Կուրատորների կատարած աշխատանքը կուրսերում:
/զեկ. փոխդեկան դոց. Ա.Թ. Գրիգորյան/
- 6 Օգտական հանաձոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի վարիչի հաշվետվությունը:
/զեկ. ՕՀՀ ամբիոնի վարիչ Ռ.Ս. Մովսեսյան/
- 7 Ընթացիկ հարցեր

1. **ԼՄԵՑԻՆ.** Դեկան Մ.Ա. Գրիգորյանի հաղորդումը 2016-2017 ուստարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցի վերաբերյալ: Մ. Գրիգորյանը ներկայացրեց մագիստրոսական թեզի, ավարտական աշխատանքի և ամփոփիչ քննության օրերը: Հարցեր չհնչեցին

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել 2016-2017 ուստարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցը:

2. **ԼՄԵՑԻՆ.** Փոխդեկան Վ.Պ. Վարդանյանի հաղորդումը 2016/2017 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների լուծարքների արդյունքների վերաբերյալ:

Արդյունքում Աշխարհագրություն մասնագիտության 1-ին կուրսում անբավարար գնահատականներ ունեցող ուսանողների քանակը 10 է, 2-րդ կուրսում՝ նույնպես 10 ուսանող, 3-րդ կուրսում 5 ուսանող և 4-րդ կուրսում՝ 4 ուսանող: Սերվիս մասնագիտության 1-ին կուրսում անբավարար գնահատականներ ունեցող ուսանողների քանակը 14 է, 2-րդ կուրսում՝ 5 ուսանող, 3-րդ կուրսում 4 ուսանող և 4-րդ կուրսում՝ անբավարար ունեցող ուսանող չկա: Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտության 1-ին կուրսում անբավարար գնահատականներ ունեցող ուսանողների քանակը 2 է, 2-րդ կուրսում՝ 7 ուսանող, 3-րդ կուրսում 3 ուսանող և 4-րդ կուրսում՝ անբավարար ունեցող ուսանող չկա: Երկրաբանություն մասնագիտության 1-ին կուրսում անբավարար գնահատականներ ունեցող ուսանողների քանակը 5 է, 2-րդ կուրսում՝ նույնպես 9 ուսանող, 3-րդ կուրսում 8 ուսանող և 4-րդ կուրսում՝ 1 անբավարար ունեցող ուսանող: Հաղորդման վերջում Վ.Վարդանյանը նշեց, որ ներկայացված անբավարարների արդյունքում հեռացման են ենթակա 5 ուսանող:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս.Ռ.Սուվարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

3 **ԼՍԵՑԻՆ** – փոխդեկան Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը կուրատորների կատարած աշխատանքի վերաբերյալ: Ա.Գրիգորյանը մանրամասնորեն ներկայացրեց կուրատորներին հատկացված ժամաքանակներն ըստ ծանրաբեռնվածության, կուրատորների վրա դրված պարտականությունները: Խոսքի վերջում Ա.Գրիգորյանը դրական գնահատեց կուրատորների կատարած աշխատանքը՝ ելնելով ամբիոններում քննարկված “դասախոսն ուսանողի այքերով” հարցման տվյալներից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանը, ով խոսքի մեջ կարևորեց կուրատորների ինստիտուտի առկայությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

4 **ԼՍԵՑԻՆ** – Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի վարիչ Ռ.Ս.Մովսեսյանի հաշվետվությունը: Հաղորդումը ընթացքում

գեկուցողը հակիրճ ներկայացրեց ամբիոնում տարբեր ուղղություններով կատարված աշխատանքները: Ապա Ռ.Մովսեսյանը անդրադարձավ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում տեղի ունեցած զարգացումներին և այն խնդիրներին, որոնք առավել կարևոր ու առաջնային են ամբիոնի կայուն զարգացման տեսակետից /հաշվետվությունը կցվում է/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դոց. Մ.Ա.Գրիգորյանը, պրոֆ. Վ.Պ.Վարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվետու ժամանակաշրջանում <Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման> ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվությունը գնահատել դրական:

5. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

5.1 **ԼՄԵՑԻՆ.** Երկրաֆիզիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցման ասպիրանտ Սամվել Մանուկի Դեմիրճյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման և նոր գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, դոց. Մ.Ա.Գրիգորյանը, պրոֆ. Վ.Պ.Վարդանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Փոփոխել Երկրաֆիզիկայի ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցման ասպիրանտ Սամվել Մանուկի Դեմիրճյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագիրը և հաստատել այն «Հրաբխային բարձրավանդակների ֆիզիկաջրաերկրաբանական մոդելները և գեոէլեկտրական ուսումնասիրությունների մեթոդիկայի կատարելագործում կառուցվածքային ջրաերկրաբանական խնդիրներ լուծելու նպատակով (ՀՀ տարածքի օրինակով)» (ԻԴ.01.08 – Երկրաֆիզիկա):

Բ. Գիտական ղեկավար հաստատել Ե.Հ.Գ. դոկտոր, պրոֆեսոր Լ.Ա.Հախվերդյանին

5.2 **ԼՄԵՑԻՆ.** Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Սիփան Բարսեղի Մանուկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Հ.Հայրոյանը, դոց. Ժ.Ա.Աչոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Սիփան Բարսեղի Մանուկյանի թեկնածուական ատենախոսության թեման «Արագածի լեռնազանգվածի հարավ-արևմտյան լանջերի ջրաերկրաբանական և երկրաբնապահպանական առանձնակատկությունները (Թալինի տարածաշրջան)» վերնագրով (ԻԴ.01.01 – Երկրաբանություն):

Բ. Գիտական ղեկավար հաստատել տեխ.գ.դ., պրոֆ. Վ.Պ.Վարդանյանին

5.3 ԼՄԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Նինել Բաղդասարի Զաքարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Թ.Գ.Վարդանյանը, դոց. Ա.Թ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Նինել Բաղդասարի Զաքարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «ՀՀ տարածքում բիոկլիմայական ինդեքսների գնահատումը կլիմայի փոփոխության համատեքստում» վերնագրով (ԻԴ.03.01- Ֆիզիկական աշխարհագրություն):

Բ. Գիտական ղեկավար հաստատել աշխ.գ.դ., պրոֆ. Թ.Գ.Վարդանյանին

5.4 ԼՄԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Նարինե Ահարոնի Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Թ.Գ.Վարդանյանը, դոց.դոց Ա.Թ.Գրիգորյանը, Վ.Գ.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Նարինե Ահարոնի Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կլիմայական էքստրեմալ ինդեքսների փոփոխության դինամիկան Շիրակի մարզում» վերնագրով (ԻԴ.03.01- Ֆիզիկական աշխարհագրություն):

Բ. Գիտական ղեկավար հաստատել աշխ.գ.թ., դոցենտ Վարդուհի Գուրգենի Մարգարյանին:

5.5 ԼՄԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Սեդա Սերգեյի Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Թ.Գ.Վարդանյանը, դոց.դոց Ա.Թ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Սեդա Սերգեյի Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Արարատյան գոգավորության բնության սեզոնային ռիթմերի տարածաժամանակային փոփոխությունների գնահատումը» վերնագրով (ԻԴ.03.01- Ֆիզիկական աշխարհագրություն):

Բ. Գիտական ղեկավար հաստատել աշխ.գ.թ., դոցենտ Արսեն Թորգոմի Գրիգորյանին:

5.6 ԼՄԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Արմենուհի Արթուրի Եղիազարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Թ.Գ.Վարդանյանը, դոց.դոց Ա.Թ.Գրիգորյանը, Վ.Ս.Մուրադյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Արմենուհի Արթուրի Եղիազարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Լեռնային լանդշաֆտների գեղագիտական գնահատումը և քարտեզագրումը (Սյունիքի մարզի օրինակով)» վերնագրով (ԻԴ.03.01- Ֆիզիկական աշխարհագրություն):

Բ. Գիտական ղեկավար հաստատել աշխ.գ.թ., ասիստենտ Վահագն Մոսի Մուրադյանին:

5.7 ԼՄԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի դասախոսներ աշխ.գիտ. թեկնածուներ Վարդուհի Գուրգենի Մարգարյանին և Վահագն Սոսի Մուրադյանին ՀՀ ԲՈՂ-ի կողմից ասպիրանտներ և հայցորդներ ղեկավարելու իրավունք ստանալու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Թ.Գ.Վարդանյանը, դոց. Ա.Թ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաշվի առնելով Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դասախոսներ աշխ.գիտ. թեկնածուներ Վարդուհի Գուրգենի Մարգարյանի և Վահագն Սոսի Մուրադյանի ուսումնագիտական ակտիվ գործունեությունը, երաշխավորել ՀՀ ԲՈՂ-ի կողմից ասպիրանտներ և հայցորդներ ղեկավարելու իրավունք ստանալու:

Բ. Միջնորդել ՀՀ ԲՈՂ-ին՝ Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դասախոսներ աշխ.գիտ. թեկնածուներ Վարդուհի Գուրգենի Մարգարյանին և Վահագն Սոսի Մուրադյանին ԻԴ.03.01. <Ֆիզիկական աշխարհագրություն> մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու իրավունք տրամադրելու համար:

5.8 ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը թիվ 330 լսարանի անվանակոչության վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿՎԵՑ – թիվ 330 լսարանն անվանակոչել Հողմիկ Հմայակի Մարգարյանի անվամբ՝ հաշվի առնելով Հ.Մարգարյանի երկար տարիների գիտամանկավարժական գործունեությունը ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետում, նրա ներդրումը երկրաբանական գիտության զարգացման ու երկրաբան մասնագետների պատրաստման գործում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դոց. Մ.Ա.Գրիգորյանը, պրոֆ. Վ.Պ.Վարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի թիվ 330 լսարանն անվանակոչել ամբիոնի պատվավոր վարիչ Հողմիկ Հմայակի Մարգարյանի անվամբ:

5.9 ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ուսանողական Գիտական Ընկերության խորհրդատու առաջադրելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դոց. Մ.Ա.Գրիգորյանը, պրոֆ. Մ.Գ.Մանասյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ուսանողական Գիտական Ընկերության խորհրդատու հաստատել Օգտակար հանաձոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի վարիչ, Ե.Գ.Թ., դոցենտ Ռուբեն Սուրենի Մովսեսյանին:

5.10 ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի միջնորդությունը Սերվիսի ամբիոնի ասիստենտ աշխարհագրական գիտությունների թեկնածու Գոռ Փարսադանի Ալեքսանյանի դոցենտի կոչում ստանալու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վարդանյանը նշեց, որ Գ.Փ.Ալեքսանյանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են դոցենտի կոչում ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Մրցութային հանձնաժողովը որոշել է հարգել Գ.Փ.Ալեքսանյանի դիմումը և միջնորդում է ֆակուլտետի գիտական խորհրդին դոցենտի կոչման մրցույթին մասնակցելու և երաշխավորություն ստանալու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս.Ռ.Սուվարյանը, Ա.Ռ.Ավագյանը: Նրանք բարձր գնահատելով Գ.Ալեքսանյանի գիտամանկավարժական գործունեությունը ֆակուլտետում, գտնում են, որ նա արժանի է դոցենտի կոչում ստանալու և առաջարկեցին հարցը դնել փակ (զաղտնի) քվեարկության:

Փակ (զաղտնի) քվեարկություն անցկացնելու համար առաջարկվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Սեյրան Սուվարյան, անդամներ՝ Ռուբեն Մովսեսյան և Նարեկ Հարությունյան:

ԼՄԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Ս.Սուվարյանի հաղորդումը փակ (զաղտնի) քվեարկության անցկացման արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից քվեարկության մասնակցել են 26-ը: Գոռ Ալեքսանյանի դոցենտի կոչում շնորհելու համար կողմ են քվեարկել 25-ը, դեմ՝ չկա, անվավեր՝ 1:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Սերվիսի ամբիոնի ասիստենտ, աշխ.գիտ. թեկնածու Գոռ Փարսադանի Ալեքսանյանին՝ դոցենտի գիտական կոչումը շնորհելու:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան